ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՏԻԿԻՆ Ի. ԱԲԳԱՐՅԱՆԻՆ

**Հարգելի տիկին Աբգարյան.**

Ի պատասխան Ձեր 03.12.2018թ. գրության՝ տեղեկացվում է.

Նոր Նորք վարչական շրջանի 2018թ. ծրագրով Դ.Մալյան փողոցի հ.4 շենքի հ.2-րդ մուտքի վերելակի հիմնանորոգման աշխատանքներ նախատեսված չեն: «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ շենքերի վերելակները ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերին և ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմինը շինությունների սեփականատերերի ընդհանուր ժողովն է, որին պատկանում է շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բնագավառում ցանկացած հարցի լուծման իրավունքը: 2018 թվականի դեկտեմբերի 13-ին հրավիրվել է շենքի շինությունների սեփականատերերի ընդհանուր ժողով՝ շենքի կառավարման մարմնի և վերելակը սպասարկող ու շահագործող ընկերության հետ համատեղ ուսումնասիրելու և հնարավորինս սեղմ ժամկետում ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ՝ հարցի կարգավորման ուղղությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ